## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ -ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-19/Մ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ**

ք․Երևան «24» հունվարի 2019թ․

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտորի ժ/պ Ռ․ Հայրապետյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ Պատվիրատու) և «ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ-ն ի դեմս գործադիր տնօրեն Ա․Մխիթարյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ Պատվիրատուի և Կատարողի միջև 2018 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-19/Մ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը։

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին պայմանագրով նախատեսված թերթերի և մասնագիտական մամուլի մատակարարման ժամկետը սահմանել սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից, ըստ հրատարակման պարբերականության, մինչև 30.12.2019 թվականը։

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը։

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով սահմանված կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ։

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից։ Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ։

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ | «ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ |
| ք․Երևան, Նալբանդյան 128 | ք․Երևան, Սասունցի Դավթի հր.2 |
| Գանձապետարանի հաշվարկային հաշիվ 900018001876 | «Արարատբանկ» ԲԲԸ |
| | Հ/Հ 1510001986720100 |
| ՀՎՀՀ՝ 01503224 | ՀՎՀՀ 00401345 |
| Ռեկտորի ժ/պ ________ Ռ․Հայրապետյան | Գործադիր տնօրեն ________ Ա․Մխիթարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |